



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՒ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄԱՏԵԱՆ ԹԵՍԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՅՐԱՆԴ ՏԻՒԳԻ ՅԻՇԱՏԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵՎԱՑ ԸՆԹԱՑՔԻՆ

ԱՐԴԱՐՈՒԹԵՒՆԸ ԿՎՐԵԼԻ ՉԵ
ԼՈՒՑՆԵԼ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐՓՎԱՆԸ

Պոլսոյ «Ակոս» շաթաթերթի խմբագիր Յրանդ Տիւգի սպանութիւնը անցեալ շաբաթավերջին մեծ ցնցում առաջացուց հայութեան կեանքին մէջ, ներգրաւելով նաեւ Արեւմտեան մեր Թեմի շրջանը: Անմիջական հակազդեցութիւնները եղան սուգի արտայատութիւններ՝ հսկում ու հոգեհանգստեան արարողութիւններ, ինչպէս նաեւ ժողովրդային հաւաքներ ու մամլոյ արձագանգումներ:

Թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Վրը. Մարտիրոսեան Ուրբաթօր, յանուն մեր Թեմի հոգեւորականաց Դասուն ու ժողովականութեան, ցաւակցական ու զօրակցական գիր մը յղեց Պոլսոյ Պատրիարք Ամենապատիւ S. Մեսրոպ Վրը. Մութաֆեանի, միաժամամակ ցաւակցութիւն յայտնելով հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ Պոլսոյ հայ գաղութին:

Նոյն առիթով, Առաջնորդ Սրբազանը հեռաձայնային հաղորդակցութեան մէջ մտաւ Լոս Անձելըսի Պոլսահայ Միութեան ատենապետ Տիար Սիմոն Աճիլաճօղլուի հետ, ցաւ յայտնեց մեծ կորուստին համար, միաժամանակ զօրակցութիւն յայտնելով միութեան ու քաղաքիս պոլսահայ գաղութին:

ՀՍԿՈՒՄ ԵՒ ՀՈԳԵՐԱՆԳԻՒՏ

Առաջնորդ Սրբազան Յօր տևորինումով, նոյն երեկոյեան ժամը 5:30ին, Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ Յսկումի եւ Յոգեհանգստեան արարողութիւններ տեղի ունեցան ի յիշատակ Յրանդ Տիւգի: Յանուն Առաջնորդ Սրբազանին, արարողութեանց ներկայ եղաւ Յոզէ. S. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, ընկերակցութեամբ Արքանապատիւ S. Նարեկ Փեղլիւանեան: Արարողութեանց առջևթեր, տեղի ունեցաւ մոմավառութիւն: «Լոս Անձելըս Թայմզ» օրաթերթը արձագանգ եղաւ այս արարողութեանց:

Նմանապես Առաջնորդ Սրբազան Յօր տևորինումով, Կիրակի, 21 Յունուար 2007ին հոգեհանգստեան յատուկ պաշտօն կատարուեցաւ մեր Թեմի բոլոր Եկեղեցիներուն մէջ, յաւարտ Ս. Պատարագի: Մեր հոգեւոր հայրերը իրենց քարոզներուն մէջ կանգ առին Յրանդ Տիւգի սպանութեան ու անոր առաջնորդող ծանօթ իրադարձութիւններուն վրայ:

«ՅՐԱՆԴ ՏԻՏԳ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԶԱՅՆ ԷՐ»

Առաջնորդ Սրբազանը նախագահեց Ենսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Սուրբ Պատարագին եւ այս առիթով տուաւ իր պատգամը: Ներկայ էին Ազգային Վարչութեան, Հ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի, շրջանի «Ռոստոմ» կոմիտէի, Պոլսահայ Միութեան եւ հայական այլ կազմակերպութեանց ներկայացուցիչները ու հարիւրաւոր հաւատացեալներ:

Իբրեւ իր քարոզին բնաբան՝ Առաջնորդ Սրբազանը ընտրած էր Յովհաննու Աւետարանի Գ. Գլուխի 19-21 համարները, ուր կ'ըսուի. «Յակառակ անոր որ լոյսը (Աստուածորդին) աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպեսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է, լոյսին կու գայ, որպեսզի յայտնի ըլլայ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած»: Առաջնորդ Սրբազանը աստուածաշնչային այս պատգամը վեր առնելով, անդրադարձաւ այն իրողութեան, որ պատմութեան ընթացքին, Լոյսի ու Խաւարի հետեւորդներու միջեւ անդադար մրցակցութիւն ու ճակատում տեղի ունեցած է ու կը շարունակուի նաեւ այսօր, լոյսի, արդարութեան ու ճշմարտութեան ձայնին դէմ միշտ ալ պայքար մղած են խաւարի ու խաւարամտութեան ուժերը, փորձած են մարել այդ լոյսը ու խեղդել արդարութեան ձայնը, սակայն լոյսն ու ճշմարտութիւնը տարած են վերջնական յաղթանակը: Առաջնորդ Սրբազանը այս մօտեցումով բացատրեց Յրանդ Տիտգի սպանութիւնը, որ թեւ կատարուած է ծայրայեղական երիտասարդի մը կողմէ, սակայն բացայատ է որ անոր ետին կը կանգնի թուրքիոյ պետութիւնը, հայութեան հանդեպ իր անհանդուրժող ու Յեղասպանութիւնը ուրացող կեցուածքներով: «Յրանդ Տիտգ արդարութեան ու իրաւունքի ձայնս եր, զոր փորձեցին խեղդել այս ահաւոր ոճիրով, սակայն ճշմարտութիւնը ու արդարութիւնը կարելի չէ լուցնել, որովհետեւ Յրանդ Տիտգի ձայնը պիտի շարունակէ ինչել իւրաքանչիւր հայու մէջ», ընդգծեց Առաջնորդ Սրբազանը, ու այս առիթով, անգամ մը եւս յանուն մեր թեմի հոգեւորականութեան ու ժողովականութեան, ցաւակցութեան խօսք ուղղեց հանգուցեալի ընտանիքին ու Պոլսահայ Միութեան:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԽԱՔ

Կիրակի, 21 Յունուարի Երեկոյեան, Առաջնորդ Սրբազանը ներկայ Եղաւ համագաղութային սուգի ու դատապարտումի հաւաքին, որ տեղի ունեցաւ Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Ա. Տէր Պետրոսեան» սրահին մէջ, մասնակցութեամբ հայկական բոլոր յարանուանութեանց, կուսակութեանց, Ազգային Վարչութեան, միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ պետական անձնաւորութիւններու:

Յազարաւոր հայորդիներ ներկայ Եղաւ այս հաւաքին. Առաջնորդ Սրբազանին կողքին, ներկայ էին նաեւ մեր թեմի հոգեւորականաց դասու անդամները, որոնք միասնաբար մասնակից Եղաւ հաւաքի Եզրափակիչ աղօթքին:

Նշենք նաեւ, որ իբրեւ Առաջնորդ Սրբազանի ներկայացուցիչ, Գերա. Տ. Միւռու Ծ. Վրդ. Ազնիկեան, ընկերակցութեամբ Արժ. Տ. Նարեկ Զին. Փեհլիվանեանի, Շաբաթ, 20 Յունիսի առաւոտուն, ներկայ Եղաւ Լու Անճելըսի

թրքական հիւպատոսարանին առջեւ Յայ Դատի յանձնախումբին կազմակերպած մամլոյ ասուլիսին:

DURING THE SERVICE IN MEMORY OF HRANT DINK

**IT IS NOT POSSIBLE
TO SILENCE JUSTICE**

DECLARED THE PRELATE

The assassination of “Agos” weekly editor Hrant Dink on Friday, January 19th, shook Armenian communities worldwide, including the larger family of our Prelacy. Over the weekend, various events were organized in memory of Hrant Dink, including vigils, requiem service, and community gatherings.

On Friday, January 19th, on behalf of the Prelacy Religious and Executive Councils,

H.E. Archbishop Mousegh Mardirossian, Prelate, sent a letter of condolence to His Beatitude Archbishop Mesrob Mutafian, Patriarch of Istanbul, expressing sympathy to Hrant Dink’s family and to the Armenian community of Istanbul.

The Prelate also spoke to Mr. Simon Ajilajoglu, Chair of the Organization of Istanbul Armenians of Los Angeles, and offered his condolences for this tragic loss.

By the ordinance of the Prelate, on Friday at 5:30 p.m., a vigil and candle lighting took place at St. Sarkis Church in Pasadena, at which Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Nareg Pehlivanian represented the Prelate. The Los Angeles Times reported on the event. In addition to the vigil, on Sunday, January 21st, requiem service took place in all Prelacy churches for the soul of Hrant Dink

On Sunday, January 21st, Archbishop Mardirossian presided over Holy Mass and delivered his sermon at Holy Martyrs Church in Encino. In attendance were representatives of the Prelacy Executive Council, A.R.F. Central Committee, local Rosdom Gomideh, Organization of Istanbul Armenians, and other organizations. In his sermon, the Prelate spoke on John 3:19-21, which states, “And this is the judgment, that the light has come into the world, and men loved darkness rather than light, because their deeds were evil. For every one who does evil hates the light, and does not come to the light, lest his deeds should be exposed. But he who does what is true comes to the light, that it may be clearly seen that his deeds have been wrought in God.” With regards to this passage, the Prelate spoke of the fact that throughout history there has been constant competition and confrontation between those who follow the Light and those who follow Darkness, which still continues today. Dark forces have always tried to silence the voices of justice and righteousness and extinguish the Light, however, Light and righteousness will be the final victors. In speaking of the assassination of Hrant Dink, the Prelate stated that although it was carried out by one extremist, it is clear that intolerance towards the Armenian people and denial of the

Genocide was the cause of the attack. “Hrant Dink was the voice of justice, and even though they tried to silence him with this ruthless crime, justice cannot be silenced because the voice of Hrant Dink will continue to resonate through each and every Armenian”, stated the Prelate, and on this solemn occasion once again expressed his condolences and that of our Prelacy to Hrant Dink’s family and to the Organization of Istanbul Armenians.

On the evening of Sunday, January 21st, the Prelate, accompanied by members of clergy, attended a community-wide mourning and condemnation that took place at the “Armenak Der Bedrossian” hall of St. Mary’s Church in Glendale, and participated in the closing prayer.

Let us also note that on the morning of Saturday, January 20, Very Rev. Fr. Muron Aznikian and Rev. Nareg Pehlivanian attended a press conference organized by the Armenian National Committee in front of the Turkish consulate.